

սերման (բայց միայն ցորենի) այսչափ ինչ քանակութիւնը՝ (որ սերմանելու ատեն որոշեալ չափով երկրի բաժին մի կը պահանջէ)՝ կ'առնուի իբր միութիւն։ Ըստ այոյմ՝ սովորաբար երկիր չափելու համար գործածուած քառակուսի չափերն՝ հօս կշիռն երով փոխանակուած են, որով մշակուած երկիրն՝ (փոխան արշինի և օրավարի)՝ խալվարով, պաթմանով և այլն, կը չափուի ու կ'որոշուի։ Բայց բնակչաց մէջ կը գտնուին և խելացիք՝ որ զայն քառակուսի չափերով կը չափելով են։ Հովտային տեղերը մանն ու պաթմանը չափելու համար՝ խանական 26 արշին լայն ու երկայն երկրի բաժին մի կ'որոշեն, որ 676 քակ. խանական արշին կ'ընէ։ Այսպիսի 25 քառակուսիք կը կազմեն խալվար (*) մը։ Լեռնակողմանց համար պաթմանի մի լայնքն ու երկայնքն 28 խանական արշինի պէտք է հաւասարի։ Իսկ եռանկիւնի տարածութիւն (մակերեւոյթ) մի՝ հետեւեալ կերպով կը չափուի. եռանկիւնոյ ամէն կողմանց մեծութիւնը կը գտնեն, կը գումարեն և չորս մաս կը բաժնեն, և չորս մասերէն մէկը ինքն իրմով կը բազմապատկեն։ Այսպէս՝ օրինակի համար, ըսենք որ եռանկիւնոյ մի ամէն կողից մեծութիւն մէկտեղ 40 արշին է, չորրորդ մասն կը լինի 10 արշին. ուստի եռանկիւնի մակերեւութին բովանդակ մեծութիւնը ստանալու համար՝ 10ը բազմապատկելով 10ով, կը լինի 100 քառակուսի արշին։

Շարունակելի

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԳԻՐԲ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՄԻ։— ՆԻԿ. ՄՈՒ ԿԱՅԱԳԻՏԻՄ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԱՅՍ ԳՐՈՒԱԾՔԻՆ ՎՐԱՅ

(Տես ի՛նչ 247)

ԺԲ

«**ՅԱՂԱԳՍ** փոխելո՛ւ նոցա անդ(ի), և գնալ յերկիրն Ասորեստանու » : — ՅԱՍՐԵԱՍՏԱՆԷ ճանապարհորդքս ուղղուեցան յերկիրն Քանանու. հոն ի Մաթիամ քաղաքի Ժողովեցան խորհուրդ ըրին տղայք՝ զվեցամեայ մանուկն Յիսուս չարչարելու

*. Խալվար մի հաւասար է $1\frac{1}{2}$ ոռոս օրավարի՝ (զոր բնակիչք կազ կ'անուանեն) Ն. Վ. Խանիկովի հետ մի խանական արշին մի 22 վերշով (0. 9768 մե. տրը) համարելով։

դիտմամբ: Յիսուս կաւ առաւ, այնու թռչուն շինեց, և իւր փըշմամբն կենդանացընելով՝ թողուց ազատ, առաջարկեց տղայոց որ բռնեն զայն: Ապա գետնէն փոշի առնելով սփռեց, և իսկոյն օդը լեցուեցաւ մօխններով, մեղուններով և պիծակներով, և ամէն քաղաքացիք կը նեղուէին: Յովսէփ ու Մարիամ՝ որոշեցին տալ զՅիսուսն ի գործ արտաշատի և ի դպրոռքին, որպէս զի անգրադ չիմնայ:

ԺԳ. « Յաղագս երթալոյ նոցա յերկիրն (Քանանու) և տղա-յութեան զոր առնէր Յիսուս, և մահուանն որ եղև իսկ և յա-րութեան և մեռելութեան զոր արար Յիսուս »: Յերկիրն իս-րայելի՝ Բողոսորոն քաղաքին մէջ կը թագաւորէր Բարէյեսու անուամբ բարեմիտ եբրայեցին: Սա ողորմածութեամբ հիւրըն-կալեց զՅովսէփ՝ մինչ նա ընտանեօք հասաւ ի Բողոսորոն. խոս-տացաւ իրեն հովանաւորութիւն, և Յիսուսի դաստիարակութիւ-նը յանձնեց Գամաղիէլ վարդապետին: Եթեմամեայ Յիսուսը իւր հարցմունքներով շփոթեց զուսուցիչն, և Գամաղիէլ չուզեց այլ եւս քովը պահել զմանուկն: Այն ատեն Յովսէփ Գամաղիէլի խորհրդով սկսաւ հիւսան արուեստը սորվեցընել Յիսուսի: Հոն ալ Յիսուս երկու հրաշք գործեց. երկու անգամ այլ՝ Յովսէփայ ձեռաց մէջ եղած փայտը՝ նորա ուղածին չափ երկընցուց: Այդ կրկին դիպուածոց մէջ՝ առաջին անգամ ընծայ կը պատրաս-տէր թագաւորին՝ տախտակ մի գեղեցիկ քանդակեալ. իսկ եր-կրորդ անգամ՝ թագաւորին յանձնարարութեամբ անոր ար-քունական պալատին շինութեան կը պարտադէր:

ԺԴ. « Յաղագս գնալոյ նոցա ի քաղաքն Տապարիա, ներ-կութեան և տղայութեան զոր առնէր Յիսուս »: Տապարիա քա-ղաքին մէջ՝ Յովսէփ ընտանեօքն պատսպարած էր Ուղ ներկա-րարին տունը: Ուղ իր արուեստը սկսաւ սորվեցընել Յիսու-սի, որ իննամեայ էր ի ժամանակին և երկու ամուսան: Օր մը Ուղ քաղաքացոյցմէ իրեն տրուած բոլոր յանձնարարութիւնքը ժողովեց, դրաւ զգուշութեամբ ի ներկ, և ինք գործով մը գը-նաց յազարակ: Երթալէն յառաջ խրատեց զաշակերտն որ մը-տադրութեամբ հսկէ տան և դռքանիւն իրաց, որպէս զի ամե-նայն ինչ ամբողջ և անփնաս մնայ. « Առաջի կայ մեզ, ըսաւ Ուղ, համար տալ քաղաքացեաց, և ածել ի՞ գանձ՝ հինգ հարիւր տե-նար »: — Հագիւ թէ տէրը աչքէն անհետացաւ, իսկոյն գնաց Յիսուս, պահարանին դռները բացաւ, ներկերն առաւ, և լեցուց բոլորն այլ կապոյտ ներկի կիստականի մը մէջ, թողուց տունը

« Իւ ելեալ գնաց ըստ սովորութեան իւրում ի խաղալ՝ օ[ւ]ր մանկունքն քա-

զարին ժողովեալ էին. և ընդ նոսա գաւտէմարտ եղեւ... և տղայքն անկեալ կային ի վերայ երեսաց իւրեանց և ոչ կարէին. և նա ձեռն դնէր և հաստատէր զնոսա. փչէր ընդգէմ՝ երեսաց տղայոց և կուրացուցանէր զայս նոցա. և դարձեալ ձեռն ածէր և լոյս տայր նոցա. և առեալ զփայտն ի ձեռն՝ և ձգէր ի մէջ տղայոցն. և առիւծ լինէր, զամենեւեան փախստական առնէր. և զորս յարեալ(?) Ղիշապն՝ ձեռն ածեալ և բռնկէր զնոսա, և ածէր զմատունս ի լսելիս տղայոցն՝ և խլացուցանէր. դարձեալ փչէր և լսողութիւն ածէր, առեալ զքարն ի ձեռն՝ փռչէր, և իբրև զհուր բորբոքէր և ձգէր առաջի տղայոցն. կիզուր զհողն իբրև զխրուի շոր. և դարձեալ ածէր զքարն առաջի բնութեանս(?) փոխեալ. առեալ զտղայսն՝ միարանեալ երթեալ յեզր ծովուն. և առեալ զգունդն և զճուկանն ընթացիւք երթալ(յր) ի վերայ իրոյն իբրև. ի վերայ պաղի խաղալ(ե)օք:

Տղայք զարմացած բոլոր տեսածնուն վրայ, գնացին քաղաքացւոց պատմելու. ժողովեցան քաղաքացիք որ տեսնեն այս հրաշագործ մանուկն: Եկաւ նաև Յովսէփ առ Յիսուս, մեղադրելով թէ ինչո՞ւ թողուց ներկարարին տունը և մոռցաւ տիրոջ պատուէրը: Տուն դառնալուն, մօրմէն ալ յանդիմանութիւն լսեց որ իրեք օրուրնէ ի վեր բանի մը գործի մը չէր պարապած: Թիսուս կը հաստատէր թէ տիրոջ ամէն գործերը ի կարգի են, և թէ ներկարարին ամէն յանձնարարութիւնքը կատարած է: Ներկարարը դարձաւ. զոր տեսնելով Յիսուս՝ իսկոյն ընդ առաջ վազեց ուրախութեամբ, և մինչ ի գետին խոնարհելով ողլուանց. Ուղ ալ՝ փոխարցած գգուանօք ողլունեց զնա. բայց մեծապէս զայրացաւ՝ տեսնելով որ Յիսուս ամէն գոյն ներկ խառն կապոյտ ներկի կիստակառի մէջ լեցուցեր է. Թիսուս կը հանգըստացընէր զներկարարն, կը հանդարտեցընէր նաև զՅովսէփ և զՄարիամ՝ առ որս կը գանգատէր տէրը. կը հաստատէր Թիսուս թէ ես բուն ներկարարի քով այսպէս սորված եմ, և թէ բնաւ ֆնաս չիկայ բոլոր ներկերն մէկ կարասի մէջ լեցընելէն: Տէրը ինքիրմէ դուրս ելաւ, առաւ կոփիչը և պատրաստուեցաւ զարնել սպաննել զԹիսուս: Փախաւ նա. այն ատեն ներկարարը ձգեց ետեւէն կոփիչը. և հարուածը սխալելով՝ վազեց որ բռնէր Թիսուս քաղքին դռներէն դուրս սլացաւ. հասաւ մինչ ի ծովափն, և սկսաւ համարձակ ջրոց վրայ ընթանալ: Ուղ դառնացած՝ քաղաքացիները օգնութեան կը կանչէր. մանուկն Թիսուս զիս կողոպտեց կ'ըսէր: Սկսան այսր անդր փնտռել փախըստականը, և հետազօտել ծովափունքը:

«Եւ եկաւ Թիսուս ի ծովէն՝ նստէր ի վերայ վիմին ի նմանութիւն տղայոյ. գային հարցանէին քաղաքացիքն. Մանուկ՝ դու ո՞չ ես տեսեալ Թիսուս որդի ծերոյն: Ասէ մանուկն. Ոչ գիտեմ: Դարձեալ լինէր ի նմանութիւն երիտասարդի. Հարցանէին զնա. Պատանեակ՝ դու ո՞չ ես տեսեալ զորդին Յովսէփայ: Ասէ Թիսուս. Ոչ:

Գարձեալ ինէր ի նմանութիւն ծերոյ: Գային հարցանէին զնա. Աւեր, ո՞չ ես տեսեալ որդի ծերոյ մի: Ատէ. Ոչ գիտեմ:

Զգտնելով զՅիսուս, բռնեցին քաղաքացիք զՅովսէփ, և ըսկրսան նեղելով հարցուփորձ ընել, Նոյն միջոցին Ուղ տուն դառնալով տեսաւ պարտիզին մէջ՝ իւր նետած կոփիչը որ արմատացած ու տերեւներով ծածկուած, ծաղիկեր ու պտուղ տուեր է: Ու երբ մտեցաւ կարասին որ մէջի ներկերը հանէ, տեսաւ որ ամէն մի ներկ՝ հրաշքով մը իւր բնական գոյնը պահեր է: « Այս աստուածային ձեռաց գործ է » մտածեց ինքնիրեն Ուղ. ներուամբն խնդրեց Յիսուսէ. գնաց պատմեց քաղաքացւոց եղած պահն չելիքը, որ թողուցին զՅովսէփ. և ինկաւ առ ոտս Յովսէփայ և Մարիամայ՝ թողութիւն հայցելով:

ԺԶ. « Յաղագս երթալոյ նոցա յԱրեւմտեա քաղաքի, և տղայութեան զոր առնէր Յիսուս, և մահուան որ եղեւ իսկ և մեռելութեան զոր արար Յիսուս »: Յիսուս տաճարմեայ էր երբ յերկրին իսրայելի Արեւմտեայ տղոց հետ կը խաղայր. անոնց առջև հրամայեց ժայռին որ գազաթը ծռէ. ու մէկէն հնազանդեցաւ: Արեւմտեամի մէջ իրեն հետամուտ պատանի մի կուրացուց Յիսուս, որուն յետոյ կրկին շնորհեց զտեսութիւն: Հոն դարձեալ կրկնուեցաւ այն շատ մը պարագայներէն մին՝ նոյն կերպով և հետեանքով. զի մին ի տղայոց իր անզգուշութեամբն կամ ընկերակցաց չարամտութեամբ՝ մեռաւ յանկարծ. տղայք յանցանքը Յիսուսի վրայ ձգեցին. իսկ նա կ'արդարանայ վտանգելոյն բերնովը՝ յարութիւն տալով նմա: Այս վտանգեալն էր Յովսէփ որդի Բերիա, որոյ հետ ընկերակիցքն տաքցած կըռուոյ մը մէջ ընդհարելով՝ ջրհոր ձգեցին զնա, ուր խեղդուելով մեռաւ:

ԺԷ. « Յաղագս երկմտելոյ անտի և գնալ յարեւելեան լերին, և տղայութեանն զոր առնէր Յիսուս ընդ մօնկունան »: ՅԱրեւմտեայ Յովսէփ ընտանեօքն Գալիլիա գնաց, ուր Յիսուս վեց ամիս կեցաւ. կը խօսէր տղոց հետ, բայց անոնք չէին հասկանար: Այն ատեն ջրհորի մը քով կանկ առաւ կեցաւ. և երբ քաղքէն ջրոյ համար տղաքն եկան, առաւ անոնց սափորներն, լախլախեց փշրեց քարանց վրայ, ու բեկորներն ջրհորոյն մէջ նետեց. այս կերպով հոն ժողովեցան տղայոց բազմութիւն, որ չէին ուզեր տուն դառնալ առանց սափորի և ջրոյ: Յիսուս հանդարտեցուց տղայքը, հրամայեց ծովուն ալեաց որ դարձնեն ջրալից անոնց սափորները. և պատուէրը կատարուեցաւ: Հրաման կու տար դարձեալ բարձրաբերձ ծառոց որ ի վայր հակեն

իրենց ուստերը. կը նստէր անոնց վրայ՝ իւր հասակակցացն հետ, կը հրամայէր որ վեր բարձրանան, և կամբը կը կատարուէր. Յիսուս աւագեց ի բորոտութենէ երկոտասանամեայ մանուկ մի:

ԺԸ. «Դարձեալ անդ(ի) գեղ մի գնաց. բժշկութիւն և սքանչելիս զոր արար ի հիւանդս»: Յովսէփ՝ Մարեմայ և մանկան հետ ճամբայ կ'ելնէ՝ Եմմաուս գեղն երթալու. Յիսուս՝ մերձակայ Եփարայ գիւղին մէջ կը սրբէ ի բորոտութենէ հնգետասանամեայ երայեցի մի՝ Յուդայի ցեղէն:

ԺԹ. «Յաղագս վասն հրեշտակի որ աստ առնել Յովսէփս գնալ ի քաղաքն Նապարեթ»: Հոն Յիսուս՝ որ այլ եւս տասուեր. կու տարին լրացուցած էր, հաշտեցուց իրարու հետ կռուող երկու տղայք, որ հարազատ եղբարք էին՝ Մաղաքիա և Միքիա: Մայրն Մարիամ՝ խօսելով Յիսուսի հետ կ'իմացընէ իւր վախն ու կասկածանք անոր ապագայի մասին. «Մենք աշխատեցանք, կ'ըսէր, ու ջանացինք մանկութեանդ օրերը որ արուեստի մը ձեռք դարնեա՛ւ. բայց չանսացիր. և ահա հիմայ եղայ չափահաս, և ի՞նչ պիտի ընես»: — Յիսուս կը տհաճէր տեսնելով որ մայրըն իսկ իւր կոյման և նպատակին հասու չէր. Ուղեորելով ընդ Գալիլիա, բժշկեց Յիսուս ասորի ծննդեամբ երեսնամեայ Քիրաւը, և անդամալոյծ Բաղդասար ծերունին որ բժշկի որդի հնդիկ հրէայ մ'էր. ասոնցմէ առաջինը բժշկուեցաւ Բոյսբորոյն գիւղին մէջ: Ետքը Յիսուս հանգիպեցաւ Խորտար և Ճոտար երկու զինուորաց՝ որ կը կռուէին. սղքա յարեկելից յերկրպագութիւն Յիսուսի եկած մոգուց բանակէն էին՝ յերուսաղէմ մնացած յար. քունի սպասաւորութեան, խոստանալով միմեանց՝ իրարու մէջ հաւասար բաժնել ինչ որ ձեռուրնին շահ կ'ընայ: Յիսուս զանոնք հաշտեցուց:

Փրկչին Մանկութեան Պատմութեանն հայկական օրինակը՝ ըստ ձեռագրին Յուսիկ վարդապետի, կ'աւարտի Յիսուսի հետեալ հակիրճ խօսակցութեամբ ընդ Խորտար և Ճոտար զինուորս:

«Ասէ Յիսուս. Զինչ կամիք առնել՝ ասացէք զճմարիտն: (Ասեն). Որպէս կամք քո հրամայեն. զի այս աւր յայտնի դատաւոր երևեցար ի միջի մեր. զի տեսաք ըզքեզ, չի՞աւ բարկութիւն մեր և Աստուծոյ սէրն եկն ի վերայ մեր. և ի գալ քս առ մեզ՝ ուրախացան սիրաւ(ք) մեր: Ասէ Յիսուս, Եթէ կամիք դարհնութիւն Աստուծոյ՝ ընկալցուք (ՂԷ) ի սիրտս ձեր: Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս ամէն:

Վեշտասաներորդ դարու մատենագիր Յովասափ Սեբաստացւոյ հայ քերթողի՝ Հին ու Նոր կտակարանաց չափագրութեան մէջ՝

գրուած յամի 1548, կը գտնենք համառօտ ոտանաւոր գրուած մ'ալ, որ յայտ յանդիման կը ցուցանէ թէ հեղինակին ծանօթ էր սոյն այս Քրիստոսի մանկութեան գիրքը: Այս ձեռագիրը մտադիւր սիրով հաղորդեց ինձ թ. Զաքարեանց բժիշկն: Սորա սկիզբներն, այսինքն յէջ 38դ « Թաղադս ծննդեան Մարիամայ և աւետման », և 39դ « Թաղադս անճառելի ծննդեան Թիսուսի Քրիստոսի » գլխոց մէջ միայն քանի մի անհաւաստի հետք կը գտնուին, ի մէջ այլոց՝ « փորձութեան ջրոյ » յիշատակութիւնն. իսկ հետեւեալ բոլոր գլուխներն՝ Մանկութեան Թիսուսի գրոց մէջ գտնուած, և նոյն նիւթին համապատասխանող գլխոց համառօտութիւնք են: Օրինակի համար մէջ բերենք ներկարարին հատուածը.

Պնացեալ Տապարիայ քաղաքն մրտին.
Անդ այր մի իւրայել անուն կոչէին.
Ետուն զՅիսուս յարուեստ ներկարարին.
Եւ նայ տարեալ եցոյց ըզգործն ներկին:
Ասէ. Որդեակ, կացիր դու ի յայս տեղին.
Եւ ինքնն զնացեալ բերել կերակրին.
Եւ Յիսուս ժողովեաց զամէն կըտաւին
Եւ եդ ի մի կարաս որ սեաւ ներկ էին,
Զի լինելոց էր սեաւ կապոյտ և դեղին՝
Ոմնն կանաչ կարմիր որդան պիտէին:
Եկեալ վարպետն ետես ի սև կարասին.
Բարկացաւ, և Յիսուս փախեաւ ի նըմին:
Եւ նա էառ զկոփիչն ընկէց հետ նորին.
Նոյն ժամն արմատացեալ պըտոյ՝ ի տեղին.
Եւ Յիսուս փախուցեալ ի վերայ ծովին
Երթայր անթաց ոտիք որպէս ցամաքին:
Յայնժամ զահի հարեալ ընդ հրաշքս բանին
Եմուտ եհան զկտաւսնն ի միջոյ կարսին.
Որպէս և տեաքն նոցա, յոր գուն ուզէին՝
Սեւ և կապոյտ, կանաչ կարմիր և դեղին:
Մինն ասէ. Ելտաւոյս իմ ներկ ոչ պիտին.
Եհան զնորս ապիսակ որպէս զառաջին.
Եւ որք ըզնայ տեսին կամ լըսէին,
Զաստուած աւրհնարանեալ փառաւորէին »:

Ամսագրոյս Յախըմթաց թիւթիմ մէջ տպագրուած էր արդէմ Ն. Ծառի այս ուսումնարանի թարգմանութեամբ մի մասն՝ երբ հրատարակուած տեսածք ի Հանգիստ Արարի: Թեքականտար չթողու համար՝ դրիմք Յան այս հատուածը: